

ԹԱԴԷՐ ԵՐԻՑՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԵԿ ԳՈՐԾՔԸ

Պատմութիւն Պետրոս առաք գոծ-
ստիկն հայոց, եւ երկուս ընկերացն
քթեղեցնց զեկորոսիկն, եւ խա-
ննց ստեփաննիկն:

(Շարանային է- վերջ)

Երեք արքա որ աստ յիշէ,
Կործեն լինել յոյժ մեծագոյն,
Չազգս իւրեանց զերկիր զտեղի,
Այժմ առնեմ բացայայտի.

Պետրոս առաքան վատեօղ զանձի,
Որ է ազգաւն զափանցի,
Որդի խղճուտ տնանկ երկրի,
Գորով աղբատ հաց մուրացի.
Չքաւորութեան ելեալ անտի,
Չուեալ զիւղայ ի նա հանգչի,
Կարգ աշխարհի իւր յղանի,
Կռնալ զաւակ սա առաջի.
Եւ ժամանեալ չափ հասակի,
Անէ ի ձեռս զգործ վաճառի,
Ի ներքս անկեալ յոյժ խորփալի,
Նման ազաւ հար զազանի.
Յարկուռնա տուեալ զտեղի,
Ուր է ժողով առն ցեղի,
Մտեալ սա ձեռ մեծ իշխանի,
Ոչ յիշելով զերն հայրենի.
Ժամանակ ինչ ի նա վարի,
Մինչ ժողովէ զինչ օտարի,
Վասն անիրաւ մամնայի,
Չհոգին մատնէ սատանայի.
Չբազում մարդիկ զանձիք լըրի,
Սա դարձող մերկ ողորմելի,
Շրջին փողոցս իբրեւ գերի,
Գոյժ ողբազին արտասուելի.
Գտեղեց որդւոց ամբօթալի,
Եւ սիրելեաց պատկառելի,
Չսպլգ եւ զղերեկ վշտօր լըրի,
Դառն եւ դժուար անտանելի.
Որպէս եւ ոմն մեծագոյն,
Որ սարուսին նա անուանի,
Տեղեալ գոլով բաղեցնցի,
Որդի առն բարեպաշտի.
Տայ սմա փոխ բազում սակի,
Տասու իրեք հազար եւս աւելի,
Ենիրաւս այս եւ առելի,
Ոչ տայ սմա եւ ոչ գրամ մի.
Ի ձերութեան ժամանակի,
Առնէ զնա կարօտ հացի,
Գործել չկարէ ըստ տնտեսի,
Եւ զմուրալն ամալի.
Այսքան չարեօր սա ոչ յազի,
Չայլ որ ինդրել հարկաւորի,
Գոլ օժանդակ իւրն բանի,
Առ ի պարուսն անմեղ մարդի.

Աստանոր աստ ոմն երեւի,
Եթե՛նապատիկ չարեօր լըրի,
Եւ սա էր լեալ նախ առաջի,
Ընկեր գորդոյ զոր ասացի.
Աւագաբոյն եւս անուանի,
Չի նախընթաց էր միւտ չարի,

Լսա գործախայ ապստամբի,
Կամ հոգեկոյ լրագրի.
Գեւթորոսն քթեղեցի,
Որ է բնիկ ճիւղայեցի,
Նախնեաց իւրոց գոլ շիրաճի,
Փոքրիկ ցուցեալ ի մէջ աղգի.
Ընկրաւս այս եւ զարեւի,
Ոչ խորհի զմահ եւ ոչ զհոգի,
Բանայ զբերանն ի հանգիսի,
Եւ ոչ գիտէ՝ թէ զինչ խօսի.
Հակառակի ընդ ճշմարտի,
Հոգւոյն օրբոյ՝ դիմամարտի.
Ըստ ստացման տեսուն յիսուսի,
Որ տայ վճիռ՝ թէ մի թողցի.
Հանդերձելուս եւ յայտմ երկրի,
Կրկին կենօր գոլ պատժելի,
Եղեալ բաժին հրոյն գեհնի,
Խառնել ի դաս սողայելի.
Դեմս ունի յոյժ աղտեղի,
Նման պղծոյն էղբելի,
Ըստ շամբրամայ վաղաշատի,
Չար ցանկութեանց հետեւողի.
Թէ գտանի մարդ ինչ բարի,
Սըմա լինի յոյժ ատելի,
Ուր երեւի՝ իւր նըմանի,
Մեծաւ պատուով զնա ընդունի.

Երկուքս այս գոլով ի մի,
Դնեն զսորհուրդս յիւրեանց միջի,
Չեմք բաւական գործոյս մեծի,
Չի կարօտմք օգնականի,

Այլ եւ ոմն աստէն յայտնի,
Չոր ասելոց եմ ի կարգի,
Եւ սա եկեալ միարանի,
Ընդ արանցս այս՝ զորս պատմեցի.
Ստարանն արձէլեցի,
Ի հայրենեաց գոլով խանձի,
Պարսիկ ազգաց գերի վարի,
Եկեալ զիւղայ առնու զտեղի.
Ընդէն եւ սա զաւակ ծնանի,
Ըստ բնութեան մարաց սնանի,
Թողեալ զտուն իւր հայրենի,
Դիմէ յերկրլըն թօսկանի.
Ժամանակաւ անդ յերկարի,
Ընդ չարացս այս համանմանի,
Յօժար կամօր սոցա հաճի,
Սասկաւ սիրովն նուաճի.
Գործոց սոցին յոյժ հետեւի,
Աւելորդօքն ուսանի,
Թէ լինէր ինչ անկարելի,
Հասուցանէր սա ի տեղի.
Եւս առաւել գերազանցի,
Տասնապատիկ եւս աւելի,
Անթիւ անհուն անճառելի,
Չարէք գործոց՝ որ ոչ պատմի.
Ըստ առակին սողմանի,
Մար՝ ի նմանիս իւր առաքի,
Եւ աղգ առ աղգ իւր հաստատի,
Որպէս երեքս դարձան ի մի.

Այս երեքեան աստ յատկանան,
Գուքս դատաւորն եւ սատանայն,

Գործեն զարիս համանման,
Ըստ քառասունցն սերաստիայն.
Գուքսն որ է գեւթորոսն,
Եւ դատաւորն ստափանոսն,
Սատանայն է չար պետրոսն,
Աղբաթաւայ անյազ խոզն.
Առին զճաշակ հարամ հացին,
Չվաճառական գործ բաց թողին,
Չգործութիւն ձեռնարկեցին,
Նմանեալ չար աւագակին.
Ըմպեն զանոյշ կարմիր գինին,
Մինչ ի կէս օրն քուն լինին,
Յորժամ պարտուց ձեռքն նեղին,
Յեկեղեցին ապաւնին.
Թէ երբ դայցեն տեսար ընկեցն,
Փութանակի ի նա փախչին,
Ի յատուծոյ ոչ երկնչին,
Ի մարդկանէ ոչ ամալին.
Չեկեղեցի զտուն արարչին,
Աւագակաց յարկ չինեցին,
Չինչ օտարաց կողպատեցին,
Առեալ փախուստ ի նա միտին.
Խուսում՝ ժամու ի նա կացան,
Միջնորդս արկին առ կռաւորագայն,
Սալկիւզօնտօթս ինքեանց առան,
Ելեալք ի նոյն չարս դարձան.
Ծարաւէք են մարդկան արեան,
Ըմպեն զինչ կաթն բարեհամ,
Չարեքս այս օրդէք նեառն,
Թողին զաստուած միանգամայն.
Չաստուածային ըզպատուիրան,
Արկին իւրեանց ոտից կոխան,
Ով ողբացող երեմիայն,
Կրկին ազգէս մեր արաման.
Ուր էք չայոց նախիկ իշխան,
Տեսէք տեղի ձեր ովք նստան,
Գողք աւագակ եւ ապստամբ,
Յանդուկք անաւք եւ անգագմբ.
Ըստ ձեր հետոց գնալ ճանացան,
Գլխակորեալ յետս գարձան,
Չի չեն յաղգէ ազնուական,
Եւ բարեգործ հաւաստական.
Այլ սերմն ժանտ են անպիտան,
Ծառոց չարաց գոլով նման,
Տալով զպտուղն կորստական,
Ըստ առակին տէրուսկան.
Ծառոց բարեաց է սեպհական,
Բերել զպտուղն վայելչական,
Չէք ի սոսա ինչ պատուական,
Եւ ոչ մի մասն բարեաց նշան.
Չի յարմատոյ չարէ բուսան,
Ի նոյն մընալ հաճողացան,
Որպէս զի յաւուրն հատուցման,
Առցեն զիւրեանցն դատաստան.

Քանզի արքս այս օրք յինցան,
Ի ժամանակս ինչ ծաղկեցան,
Վասն ոչ գորդ արմատ յինքեան,
Վաղաղակի ոչնչացան.
Սերով յիւրեարս կապակեցան,
Սակայն փութով բաժանեցան,
Չի աստուծով ոչ միացան,
Վասն այն փեալ լուտ քակեցան.
Ըստ աշտարակին քաղդեական,
Որք ջանային կատարել զայն,

¹ Ուղղելի՛ Ժողով: «Ամենայն մարմին ըստ
ազգի ժողովի, եւ այլ ի նմանիս իւր յա-
րեւոյն»: Սերաբ, ԺԳ. 20 (Վ. Ենեւ. 1833):
«Ազգ յազգ երթայ, եւ մարդ ի նմանիս
իւր»: Աստուածաշուքն, Չօհրաս, (Վ. Ե-
նեւ. 1805) Հատ. Գ. Սերաբ, անդ:

² Խուսն, Երեմիային՝ Խուսում: